**ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի 3-րդ , 4-րդ , 5-րդ , 23-րդ և 24-րդ փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման տեխնիկական բնութագիր**

# Ներածություն

Մշակել Աստղաձոր բնակավայրի 3-րդ , 4-րդ , 5-րդ , 23-րդ և 24-րդ փողոցների ողջ երկարությամբ արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագիծ , շուրջ 2100 գծմ:

Շահառուներ , Աստղաձոր համայնքի բնակիչներ՝ 4300 մարդ:

## 1.Կիրարկման ոլորտը

Սույն բնութագիրը նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի 3-րդ , 4-րդ , 5-րդ , 23-րդ և 24-րդ փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրման ծախսերի գնահատման և տեխնիկական բնութագրի կազմման համար:Այն նպատակ ունի համայնքներին տրամադրվող սուբվենցիայի ծրագրի իրականացման շնորհիվ բարելավել համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակը,որը կփոխի համայնքի տեսքը , բնակիչների ապրելակերպը և բնակավայրը կունենա լուսավորություն՝ երեկոյան ժամերին:

## 2.Համառոտ նկարագիր

Աստղաձոր բնակավայրը գտնվում է Սևանա լճի ավազանում, ծովի մակերևույթից 2040մ բարձրության վրա: Համայնքի փողոցների միայն 30%-ն է ապահովված լուսավորության ցանցով , էներգախնայող լամպեր են տեղադրված: Համայնքի բյուջետային միջոցներով ամեն տարի կատարվում է գործող փողոցային լույսերի ընթացիկ նորոգում և պահպանում: Փողոցների մեծամասնությունը ասֆալտապատված են : Հաշվի առնելով բնակավայրի մի շարք առաջնահերթություններ և զարգացման ուղղություններ,փոքր և միջին բիզնես զարգացում, բնակիչների սոցիալական պայմանների բարելավում. շահառուների ապահով և անվտանգ տեղաշարժը , բնակավայրում անվտանգ կենսապայմաններ ապահովելը , բնակավայրում հրատապ է դարձել խիտ բնակեցված փողոցներում արտաքին լուսավորության ցանցի կառուցմանը, որը էապես կփոխի նաև բնակավայրի տեսքը:

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Սույն աշխատանքները իրականացվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքի Աստղաձոր բնակավայրի 3-րդ , 4-րդ , 5-րդ , 23-րդ և 24-րդ փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցում փողոցների գրեթե ողջ երկարությամբ շուրջ 2100 գծմ :

**Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիր**

- Հենասյուների տեղերի փորում հորատիչ մեքենայով
- Հենասյուների տեղերի փորում ձեռքով.
- Հենասյուների ներկում
- Մետաղյա հենասյուների տեղադրում , մեկուսիչների հետ միասին:
- Բետոնյա շաղախի լիցք
- լուսատուների՝ 45- 50 wt բարձր որակի ԼԵԴ լամպերի տեղադրում
- Էլեկտրոնային հաշվիչների տեղադրում , ժամային կարգավորիչներով
- Մալուխի անցկացում և ձգում մալուխ ,,ՍԻՊ,, տեսակի:
- ՀԷՑ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համապատասխան լուսավորության ցանցի միացում սնուցման համակարգին:

Աշխատանքները իրականացնելիս հաշվի առնել տվյալ տարածքի կլիմայական պայմանների առանձնահատկությունները:

Աշխատանքների կատարման համար պահանջվող մեքենա-սարքավորումների, տեխնիկական միջոցների ցանկ:

- Բեռնատար ցանկացած տիպի 1 միավոր
- Ամբարձիչ ցանկացած տիպի 1 միավոր
- Հորատիչ մեքենա 1 միավոր

Աշխատանքների համար պահանջվող լիցենզիաներ՝

Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում

Էներգետիկայի

Պայմանագրի կատարման համար նվազագույն պահանջներն են՝

Առնվազն մեկ աշխատակից, որը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն, ինժեներ-շինարարի, բանվորական աշխատուժ ըստ անհրաժեշտության:

Աշխատանքների իրականացման պահանջվող հաշվարկային ժամկետը՝ 90 աշխատանքային օր:

**Աստղաձոր բնակավայրի վարչական ղեկավար՝ Մխիթար Ալեքսանյան**